Ամփոփ նյութ

Ա/Ձ «ԱՐԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ» ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 635) ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ **Ա/Ձ «ԱՐԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ» ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 635)** փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՐՈՇՈՒՄ
26/10/2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/557Ա

Ա/Ձ «ԱՐԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ» ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 635) ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 18.05.2021Թ. ԹԻՎ 635/1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԿԵՏՈՎ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՈՇ ՓԱՍՏԵՐԻ ՀԻՄՔՈՎ (ՄԱՍՆԱԿԻ) ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումները թույլ տալու համար Փոխանակման կետի նկատմամբ նշանակել (կիրառել) տուգանք՝ 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Սույն որոշման նկարագրական մասի 2-րդ կետում նկարագրված հետևյալ գործարքների մասով հարուցված վարույթը կարճել՝ արձանագրված փաստերը խախտում չլինելու հիմքով.
   1) 09.01.2021թ.-ի (35,850 Եվրոյի վաճառքի գործարք՝ թիվ 20210109438557 անդորրագիր).
   2) 08.12.2020թ.-ի (950,000 ՌԴ ռուբլու վաճառքի գործարք՝ թիվ 20201208437515 անդորրագիր):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու պահից երկու ամսվա ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ